

LISP 1

Հրայրի արկածները շարունակվում են: Նա, ազատելով կղզին անեծքից ցանկանում է, վերջապես, հեռանալ այստեղից: Ծովափին նա նկատում է մի փոքրիկ նավակ, որն ուներ ծրագրավորվող ռոտոր: Ավադ, նրա խորամանկ թշնամիները դիտմամբ փչացրել էին ծրագրավորվող ռոտորը: Շարքից դուրս էր եկել նավակը դեկավարող LISP (Little Ship Programmin) լեզվի իրականացնող հատվածը:

Լեզուն բաղկացած է արտահայտություններից: Դրանք գրվում են պրեֆիքսային ձևաչափով, այն է՝ նախ գրվում է գործողությունը, ապա դրան հաջորդում են արգումենտները, որոնք, իրենց հերթին կարող են լինել թվեր կամ արտահայտություններ: Օրինակ՝ `(mul (add 3 5) 2)`, ինչը համարժեք է $(3 + 5) * 2$ թվաբանական արտահայտությանը: Մասնավորապես, հայտարարված էին ֆունկցիաներ, ինչպես նաև կանչվում էին դրանք ու որոշ հենքային ֆունկցիաներ՝

- `(add x y)` գումարում
- `(sub x y)` հանում
- `(mul x y)` բազմապատկում
- `(div x y)` բաժանում, ամբողջ մաս
- `(print expr)` տպել `expr` արտահայտության արժեքը:

Երաշխավորվում է, որ ծրագրային կոդը կոռեկտ է, արդյունքը գտնելու համար հարկավոր է կատարել 5-ից քիչ գործողություն: Ընթացիկ ոչ մի գործողության արդյունքը բացարձակ արժեքով չի գերազանցում 10^3 -ը: Ավելորդ բացակները և նոր տողի սիմվոլները անտեսվում են: Ավելորդ փակագծեր չկան: Մեկ կոդում կարող են լինել մի քանի հաջորդական գործողություններ, որոնք բաժանված են բացակով կամ նոր տողի սիմվոլով: Ծրագրային կոդում տրված բոլոր թվերը ոչ բացասական ամբողջ թվեր են և չեն գերազանցում 10^4 -ը:

Մուտք

Մուտքում տրված է ծրագրային կոդը:

Ելք

Անհրաժեշտ է իրականացնել կոդի իրականացման արդյունքը:

Օրինակ

Մուտք.

```
(print (mul (add 3 5) 2))
```

Ելք.

16